


ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ. Tiflis. Redaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի անտեղի ձգտում.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Նամակ Ղուբայից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բաղրաբա. Արտաքին լուրեր.—
ԽԱՌՆ ԼՈՒԻՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՊԱՏԱՍԽԱՆ
ՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱՆ
ԿԱՆ. Վիեննայի գեղեցիկ սեռի գործունէութիւնը:

ՄԻ ԱՆՏԵՂԻ ԶԳՏՈՒՄ

Կ. Պոլսից անախորժ լուրեր են հասնում
մեզ այն դերքի մասին, որ բռնել են Յա-
րուլիւն պատրիարքը. և իր արքանականե-
րը դէպի ազգային սահմանադրութիւնը:
Յարուլիւն պատրիարքը փոփոխութեան է
ուզում ենթարկել սահմանադրութիւնը.—
և ահա վրդովմունք է բարձրանում: Կ.
Պոլսի ազգային ժողովը իր սխալմունքների
պատճառով սկսում է այդպիսով վայելել և
եթէ այսպէս շարունակվի, դժուար թէ ազ-
գասեր երեսփոխաններից շատերը կարողա-
նան դուրս գալ իրանց դէմ լարած թա-
կարէններից:

Ազգային սահմանադրութեան քանհինգ-
ամեակը նորերումս փառաւոր կերպով տօն-
վեցաւ Բոսֆորի ափերի մօտ: Սահմանա-
դրութեան անցեալ պատմութեան հիմնական
ուսումնասիրութիւնը բերում է մեզ այն
եզրակացութեան, որ յիշատի թիւրքահա-
յերի սահմանադրութիւնը կարօտ է հիմ-
նական փոփոխութեան, հիմնական վերա-
նորոգութեան: Յարուլիւն պատրիարքը և
իր կուսակցութիւնը շատ անմեղ կեր-
պով են սկսում գործը: Նրանք ցանկու-
թիւն են յայտնում որ սահմանադրութեան
բոլոր կէտերը ձգուլթեամբ իրագործվեն:
Այդ արտաբնական բարի ցանկութիւնը
մի միջոց է միայն ցանկացած նպատակին
հասնելու համար:

Սահմանադրութեան հաստատութեան
կարճ ժամանակից յետոյ, երբ Կ. Պոլսի
գործիչները համազօրեցան, որ անկարելի է
ձգուլթեամբ իրագործել սահմանադրու-
թեան բոլոր կէտերը, հարց յարուցվեցաւ
փոփոխութիւններ անելու: փոփոխութիւն-

ները տեղի ունեցան, բայց ներքին կեր-
պով այսինքն, նոր կանոնները չը ներկա-
յացվեցան Բ. Դրան հաստատութեանը:
Սահմանադրութեան զօրութեամբ, Կ. Պոլսի
ազգային ժողովը երկու տարին մի անգամ
ժողովներ պիտի գումարէ, և ժողովները
պիտի գումարվեն շարունակ երկու ամիս:
Ոչ թէ միայն երեսփոխանների եռանդի և
պարտաճանաչութեան պակասութիւնը, այլ
նոյն իսկ սահմանադրութեան մի քանի յօդ-
ւածներն պահանջները դժուար իրագործե-
լի դարձրին այդ կանոնները: Ազգային ժո-
ղովը ընդունեց մի ներքին կանոնադր, որի
հիման վրա աւելի քան տասն տարի է, որ
ժողովը գործում է: Տեղեկութիւն ունի ար-
դեօք Բ. Կուսը այդ ներքին փոփոխութիւն-
ների մասին, այդ հետաքրքիր չէ. դիտա-
ւորն այն է, որ նա ոչինչ ընդդիմութիւն
ցոյց չը տուց նոր փոփոխութիւններին:
Անցել են տարիներ, և ահա Յարուլիւն
պատրիարքը և իր մտերիները հարց են
բարձրացնում որ պէտք է ոչնչացնել այդ
ներքին կանոնադրը, և հետեւի սահմա-
նադրութեան պահանջներին ձգուլթեամբ:
Պարզ բան է, որ ջնջելով ներքին, մասնաւոր
կանոնադիրը, անհրաժեշտ կը լինի ստեղ-
ծել մի նոր կանոնադրութիւն, ըստ որում
սահմանադրութեան սկզբնական խմբա-
գրութեան մի քանի պահանջները, ինչպէս
փորձը ցոյց է տուել, և ինչպէս յիշեցինք,
ներկայ դրութեան մէջ անիրագործելի կամ
առ նուազն դժուար իրագործելի են: Ու-
րեմն անհրաժեշտ կը լինի նոր փոփոխու-
թիւններ անել և փոփոխած սահմանադրու-
թիւնը ներկայացնել Բ. Դրան հաստատու-
թեան: Թէ ի՞նչ կանի թիւրք կառավարու-
թիւնը հարցը սահմանադրութեան հետ,
այժմ ներկայ հանգամանքներում, ներկայ
արաւմարութեան ժամանակ, դա մի մեծ
հարց է, որը պարզելուց յետոյ միայն Կ.
պոլսի ազգայինները պիտի վճռեն դիմել Բ.
Դրանը, որը իրաւաբանական տեսակէտից,
դեռ ամէնից առաջ, կարող է ջնջել և ա-
պօրինի համարել այն բոլորը, ինչ որ տա-
րիներ ընթացելու արեւ է Կ. Պոլսի ազ-
գային ժողովը ներքին, Բ. Դրան կողմից չը
հաստատված կանոնադրի հիման վրա: Ա-

մենագլխաւորը այն է, որ Յարուլիւն պա-
տրիարքի յարուցած հարցը, — ձգուլթեամբ
իրագործել սահմանադրութիւնը, մի միջոց
է սահմանադրութեան փոփոխութեան ձեռ-
նարկելու: Սկզբունքով վերցրած, թիւրքաց
հայերի սահմանադրութեան փոփոխութիւ-
նը անհրաժեշտ է. այդ փոփոխութիւնների
մասին «Մշակը» միշտ խօսել է: Սահմանա-
դրութեան փոփոխութիւնը ձեւակաւ չը
պէտք է լինի. փոփոխութեան նպատակը
պիտի լինի ներքին, ինքնավարական ոյժը
ժողովրդի ձեռքը տալ, զորացնել բուն Հա-
յաստանի ժողովրդական երեսփոխանների
թիւրք և իրաւունքները, և եթէ ներկայ
հանգամանքներում դժուար է Հայաստանի
հողի վրա հաստատել Կ. Պոլսի ազգային
ժողովի իրաւունքները, պէտք է գէթ զօ-
րացնել այն ձայնը, որ կայ սահմանադրու-
թեան և ժողովրդի մէջ, և գործը այն դը-
րութեան մէջ դնել, որ Կ. Պոլսի ազգա-
յին ժողովի երեսփոխանները կօշիկներ
խնդրեն չը պաշտեն, և չը բաւակա-
նանան հայ ժողովրդի անունով Բոսֆորի
ափերը ձաճաւան և անբովանդակ ճաւերով
թնդացնելով:

Սակայն ցաւալին այն է, որ սահմանա-
դրութեան փոփոխութիւնների ժամանակ
անցաւ, և պէտք է սպասել որ կրկին գա-
յար մար ժամանակը: Յարուլիւն պա-
տրիարքի ձեռքով չը պէտք է փոփոխվի
սահմանադրութիւնը: Կ. Պոլսի հայերը գը-
լխաւորապէս զգոյշ պիտի լինեն իրանց ա-
ռաջ փորձ փորձի մէջ աւելի չը խրվելու
համար: Մենք կարծում ենք, որ գէթ
թիւրքաց Միջին իստեղիկներին, երկտասար-
դութիւնը ձանաչում է Կ. Պոլսի այժմեան
պատրիարքին:

Խնդիր պարզ է Կ. Պոլսի ազգային ե-
րեսփոխանները, Կ. Պոլսի հայերը, եթէ յի-
շատի չեն կամենում ծանր հետեւանքների
հասնել, պէտք է այժմեանից լռեցնեն այն
բոլոր ձայները, որոնք սահմանադրութեան
ճիշտ գործադրութեան պատրուակի
տակ խաղեր են ուզում խաղալ և վտանգի
մէջ դնել նոյն իսկ սահմանադրութեան
գոյութիւնը: Եթէ սահմանադրութեան
խնդիր փոփոխութեան անհրաժեշտու-

թիւնը գգում են Կ. Պոլսի գործիչները, ա-
մենից առաջ հարկաւոր է որ սպասեն պա-
տեհ ժամանակի, հարկաւոր է որ ձեռք
տալով այդ տեսակ նշանաւոր գործին նախ
և առաջ ձեռք բերած լինեն հեղինակու-
թիւն ունեցող մի պատրիարք:

Այդ տեսակ նշանաւոր, պատասխա-
նատու գործ զուլս բերելու համար, ինչ-
պէս ազգային սահմանադրութեան հիմնա-
կան վերաքննութիւնն է, հարկաւոր է որ
Կ. Պոլսի պատրիարքը բարոյական մի մեծ
հեղինակութիւն ունենայ Բ. Դրան աչքում:
Իսկ Յարուլիւն պատրիարքը զուրկ է այդ
տեսակ հեղինակութիւնից:

Խ. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴՈՒԲԱՅԻՑ

Յուլիսի 12-ին

Տօրոնի հարցը իր գնի հետ մեղադրում աւելի և
աւելի բարձրանում է: Պէտք է ասած, որ դրա-
նից է կախված Ղուբայի այժմեան վիճակը: 1860
— 70 թվականներում, երբ տարւոյ լաւ գնի էր
գնում, Ղուբան գտնվում էր իր ծաղկած դրու-
թեան մէջ: Բայց այդ երկար չը տևեց: 1873
թվականի վերջերում տարւոյ ընկաւ, սատակ
հարուածելով թէ զուբեցիներին, թէ դերբենդցի-
ներին: Նրանցից շատերը, որոնք մինչև այն ժա-
մանակ տասը, հարիւր հազարների կարողութեան
ունէին, աղքատացան, շատերը պարտքի մէջ
թաղվելով մահակացան: Դրա պատճառը, ինչ-
պէս յայտնի է, արհեստական ալիքարինի (alibaz-
rin) գիւտն է: Այնուհետև դուբեցիները շատ վատ
օրեր տեսան, մինչև անգամ շատերը սկսեցին
թողնել Ղուբան, մինչդեռ առաջ շատերն էին
շատապում դէպի այդ քաղաքը: Դրանից յետոյ ըն-
կաւ և առեւտուրը, որը և մինչև այժմ գտնվում
է մի տեսակ թմրած դրութեան մէջ:

Բայց վերջին ժամանակներում, ինչպէս մի
անգամ յայտնել էի, դուբեցիներին ուրախացրեց
մի լուր, — տօրոնի կրկին գնի մէջ բարձրանալը:

ԲԱՆԱՍԻՐԱՆ

ՎԻԵՆՆԱՅԻ ԳԵՂԵՑԻՍ ՍԵՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹԻՒՆԸ

Ամենքին յայտնի է, որ Արեւելքի թէ անկիրթ
և թէ տակաւին կիսակիրթ երկրներում կինը
բարոյապէս նշանակութիւն չունի: Այդ աշխարհ-
ներում գեղեցիկ սեռը նիւթապէս է գնահատվում
թանկագին մի գործարի նման, սիրվում է որպէս
արաբական մի նոժոյգ, պահվում է ինչպէս կեն-
դանոցում պահվում են մեծագին անասունները:
Հետեւաբար կինը՝ տիրոջը կողմից իրան ընծա-
րուած այս լոկ նիւթական սիրոյն փոխարէն, ին-
քուն է կամայ ակամայ նիւթական մի սեղ ար-
տայապետով, այդ մարդուն անձնատուր է լի-
նում, անտարբեր և անզգայ, հոգւոյ և սրտի
խանդավառական զգացմունքներից բոլորովին
զրկված, և միմիայն սերնդաբերական պարտք կա-
տարելու անանական պաշտօնին դատապար-
տուած մի արարած է պատկերանում: Այսպիսեաւ
մշտական սովորութիւնը երկրորդ ընտելին դառ-
նալով, կեղծ կինը բռնի մի անզգայութեան գոր-
ծ է լինում: Իսկ երբ, արեւելածնունդ գեղեցիկ սե-
ռը, ստեղծապարզ և հոգեկան չնորհաց բնածին
խմորից մի նոյն է տեսնում իր մէջ և զգում է
որ և է մտաւորական, բարոյական մի թելադրու-
թիւն, նա չէ հաւատում կամ ականջ չէ դնում,
որովհետև նա կարծում է կամ նրան այնպէս կար-
ծել տուած են, որ այդ մարդն է միմիայն զգա-

յուն, խելացի, գործունեայ, հանձարեղ և այլն,
թէ և լինի այդ այդ մարդն ամենայնպէս և ամե-
նապատկան մի արարած: Երկուսն. խառն ընկե-
րութեան վայելչութիւնից դուրս ապրելու բար-
բարոս սովորութիւնն էլ աւելանալով բազմախու-
թեան ախտի վրա, քիչ չէ օգնում արեւելքի կնոջ
յիշեալ անզգայութեանը:

Թէպէտ քրիստոնէայ արեւելքին իր կրօնքի օրէն-
քովը գէթ զեղծ մնացած է բազմախութեան և այլ
որա նման վայրենի սովորութիւններից, բայց մի-
միայն ապրող և իշխող ազգին անապաշտութիւն-
ները վարակել տալիս նման սակաւ չեն ապակա-
նած, և քիչ հարուած չեն տուած բարոյականին,
և ահա քրիստոնէայ արեւելքին էլ հպատակուելով
այն սխալ գաղափարին թէ կինը ոչինչ բան է,
մտադ երկայն և խելքը կարճ է, ուստի բնաւ կա-
րեւորութիւն չէ տալիս ոչ նրա գոնէ սկզբնական
կրթութեան, ոչ էլ այն բնածին ձիւղբերին, որոնց
մէջ փայլում է գեղեցիկ սեռի կոչումը: Մինչդեռ,
հարկ կայ ասելու, որ այդ գաղափարը չերկիրը
չը դառնար, արեւելքը կը դառնայ՝ ասելու չափ
սխալ է:

Վիեննայի գեղեցիկ սեռին գործունէութիւնը
օրինակելի է: Բժշկականութիւն սովորող չը կայ,
միայն մանկաբարձութիւն կը սովորին առհասա-
րակ այլի կանայք, որոնք նոյն իսկ մանկանոցում
յաջողակ փորձերով ընտելութեան տալուց և վկա-
յագիր ստանալուց յետոյ գործնական մանկաբար-
ձութիւն կը սկսեն: Իսկ աղջիկները պէտք է
տեսնել. տղամարդոց չափ գործում և փող են
աշխատում: Սրանք բժշկականութեան ճիւղն ընտ-
րելու պէտք չունին, որովհետև տեղի սեռից ար-
դէն աւելի քան բաւական բժիշկներ կան Վիեն-

նայում: Բժշկական զանազան ճիւղերի մասնագի-
տութիւնը օրըստօրէ աւելանում է: Ներքին և
արտաքին մարդկային իւրաքանչիւր գործարան և
անդամների համար յատուկ մասնագէտ բժիշկներ
լինելով հանդերձ, տակաւին ամբողջապէս չէ բա-
ժանուած և ուզում են աւելի ընդարձակել մաս-
նագիտական ճիւղերը: Այս հաշուով օր պիտի
գալ, որ զոյգ զգայարանաց ամէն մէկին, այսինքն
ձայն ականջի համար զատ, աջ ականջի համար
զատ բժիշկներ և աջ ու ահակ աչքերի համար
ևս յատուկ ակնաբոյժներ պիտի տեսնուէին, մինչ-
դեռ կը գտնուին դեռ. այնպիսի երկրներ, ուր
բժիշկները ամենաբոյժ հանձարներ լինելով, աչքի
ցափ համար քիչ դեղ են տալիս, և մանկաբար-
ձութիւն ևս գիտեմալով, յերկինս համբարձման
հանգէս կատարել են տալիս թէ մօրը և թէ երե-
խային:

Չէ կարելի ասել որ արեւելքի կնոջ պակաս է
մտաւորական գործութիւնը. ընդհանրապէս արե-
ւելքին արեւելք ընդունակութեանը կը տեսնանայ
տեսնելով նրա նուրբ գեղարուեստական ձեւա-
գործները, և անկեղծաբար խոստովանում է ասե-
լով թէ, եթէ արեւելքին կրթութեան պայմաննե-
րից զրկուած չը լինի և կանոնաւոր զարգացում
ստանայ, մեղ տասնապատիկ կը գերազանցէ:

Վիեննայում հեռագրատան և նամակատան հա-
ղորդակցութեանց բոլոր զարգիւնները աղջիկներ
են: Սրանց արաւագորութիւնը և հաշուեպահու-
թիւնը չը կարծեմ որ ունենան մեր արեւելքի տը-
գեղ սեռի պաշտօնեաները: Արեւելքում կը տեսնէ
մօրը նամակատան կամ հեռագրատան մի գրա-
սենեակում մի քանի պաշտօնեաներ, բոլորը հա-
գուած սկուած, համագեղաններով ուռած կուրծ-

քներին նշաններ, փայլուն կոճակներ, մօրուքներ,
մագերին սանդուղ, լուրջ կերպարանքով մար-
դիք. մարդ կը վարանի մինչև անգամ սրանց մեր-
ձենալու և մի խօսք ուղղելու, կարծես կառավա-
րութեան ամենակարեւոր հարցերը լուծելու պաշ-
տօնը ունեցած լինէին, այնքան խորհրդաւոր կեր-
պարանքներ ունեն, մինչդեռ հասարակ կամ ա-
պահովեալ նամակներ կշռելով վարձը ընդունե-
լու, նամակադրոյժ ծախելու կամ փողերի մի ըն-
կալագիր գրելու անմեղ մի պաշտօնով նստած
են այնտեղ: Այնպիսիք մինչև որ մի ընկալա-
գիր գրելու համար, որոյ արդէն երկու եր-
րորդ մասը տպագրեալ է, գրիչը թանաքամանին
մէջ թափախն, Վիեննայի 16 տարեկան աղջիկը
10 ապահովեալ նամակ կը կշռէ, վարձը կը հա-
շուէ, ընկալագիրը կը գրէ, կը վերջացնէ: Օրը մի
քանի ժամ պարապվելու պայմանաւ է ծառայու-
թիւնը, բայց նոյն իսկ նամակատան մէջ իր մօտ
ունի զուլպայի ասեղները, մկրատը, մատնոցը,
կարթը և այլն. մի քանի տասնեակ քօպէներ ա-
զատ ժամանակ ունեցածին պէս իսկոյն կըսկսի
հիսուր, կարել, ասեղնագործել: Օրական գործը
տակաւին չը վերջացած, կէս օրից առաջ կամ յի-
տոյ դաշնամուրի կամ օտարականաց գերմաներէն
լեզուի խօսակցութեանց դաս է տալիս, գիշերնե-
րն էլ գնում է թատրոն օթեակ բանալու ծառա-
յութեամբ, և այս այլ և այլ պաշտօններից ամիսը
100 գուլդէնի չափ փող ստանալով ապրում է,
խնայում է, հաւաքում է և 10—15 տարից յի-
տոյ 8—10 հազար գուլդէնի տէր է դառնում:
Սրանք Post-manipulantin և Telegrafistin անուն-
ներն են: Կրում. աշխատասիրութեան ճշմարիտ տի-
պարներ են՝ զգաստ, համբերող, և պարտաճանաչ

բոլորական դիտարկում: Այս ճանաչողական խնդիրը, բարձր մեծ դուրսը և զանազան պատճառներով խնդիրների անդամները:

ԲՈՒՄԲԵՑ, 23 յուլիսի: Բաժանման ճանաչողական խնդիրների բաժանի շինելը վերջացրած է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ	
Յուլիսի 22-ին	
Ռուսաց 1 լուր 1 ժողովի վրա արժեք	231 1/2 պեն.
— — — — —	198 1/2 պեն.
— — — — —	246 1/4 պեն.
Ոսկի — — — — —	8 ր. 49 կ.
Մաքսային կուպոններ — — — — —	8 > 48 >
Արծաթ — — — — —	1 > 27 >
Բորսային դիտարկումներ — — — — —	41 1/2 > 60 >
Պետական 5% տոկոս 1-ին շրջանի	100 > 87 կ.
— — — — —	100 > 25 >
— — — — —	100 > 25 >
— — — — —	100 > 12 >
— — — — —	100 > 37 >
Արևելյան 5% փոխառություն 1-ին շրջ.	99 > 62 >
— — — — —	99 > 62 >
— — — — —	99 > 86 >
Ներքին 5% առաջին փոխառություն	237 > — >
— — — — —	227 > — >
51/2% բենտոն — — — — —	104 > — >
Ոսկեայ բենտոն — — — — —	184 > 25 >
Նոր կոնսոլիդացիոն փոխառություն	157 > 25 >
50% գրավական թղթեր կալուած.	— > — >
— — — — —	160 > — >
51/2% գրավական թղթեր խնդիրների	97 > 25 >
— — — — —	101 > 75 >
60% գրավական թղթ. խնդիրների կալ. բան.	102 > 50 >
— — — — —	101 > — >
— — — — —	100 > 75 >
— — — — —	102 > 75 >
— — — — —	101 > 50 >
— — — — —	101 > 25 >
— — — — —	101 > — >
— — — — —	27 > 43 >
— — — — —	18 > 43 >
Վճարված-կամեցած բանկի ակցիաները	535 > — >
Ռուսաց երկաթուղիների գլխավ. ընկ.	260 > — >
Բերլին-Վյուրցբուրգ ընկ.	95 > 50 >
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլի-	— > — >
գացիաներ — — — — —	93 > 25 >
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ	96 > — >
Օդեսայի — — — — —	94 > — >
Նոր երկաթուղային բենտոն — — — — —	99 > 62 >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	86 > — >
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրությունը	— > — >
հանդարտ է:	— > — >

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՆԱԿՈՒՍԵՎ. Ա. Ս. Ս.—ան. Դուք հարցնում եք թե ինչ պայմաններով Ներսիսյան դպրոցը գրեթե ամբողջությամբ է ընդունում Մենք այդ պայմանները մասին տեղեկություններ չունենք, որովհետև Ներսիսյան դպրոցի հոգաբարձուները ոչ մի տեղ չեն հրատարակում այդ պայմանների մասին: Լա կանեք որ նամակով դիմեք հոգաբարձուներին հետևելու հասցեով. Тифлисе, Попечительству армянской духовной семинарии.

Հին-ՆԱԿՈՒՍԵՎ. Ս. Օ. Ուղարկեցինք ձեզ «ՅԵՈՆ. Սոլ. Կր. Արմ.» բրոշյուրը, բայց այդ բրոշյուրի հայերեն լեզուով չունենք: Երբ դասախոսություններ կարդացվեցան, նա անմիջապես տպվեցան հայերեն լեզուով «Մշակի» մեջ: Այնուհետև թարգմանվեցան գերմաներեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով և հրատարակվեցան առանձին բրոշյուրներով: Իսկ հայերենը «Մշակից» չարտատպվեցան: Այդ դասախոսությունը ապրիլ-ցու «Մշակի» մեջ 1879 թվին, մայիս ամսին:

ԱՆԱՊԱ. Գ. Տ. Օ. Ձեր պահանջած «ՅԵՈՆՈՄ. Սոլ. Կր. Արմ.» բրոշյուրը ձեզ ուղարկված է:

ԴԱՐԱՋԻՍԿԱ. Ս. Ղ. Ձախուռնյանի «Արմ. Սո-

3313 ВЪ ЛИЦѢ Рафаила Патканяна» բրոշյուրը ուղարկված է ձեզ: Կը հարցնեք կենսագրական գրավածառանոցում ռուսերեն «Մշակի» լեզուով հրատարակված է: Եվ այն ժամանակ կը պատահանեք:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Պատկերազարդ ԴԱՍԱԳԻՐԻՒՆԴԱՆՈՒՄՈՒՅԻՑ ԴՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ Լ. Խան-Աղանյանի, գրավածառների մաս 20 կոպեկ:

ՖԱՐԱՍԻԱԿԱՆ ՆԱԽԳԻՆՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(N. PAQUET ET COM.)

Կանոնադր և ուղղակի երթևեկություն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱՐՈՒՄԻ մեջ և փոխադարձ.

Չորեքշաբթի, օգոստոսի 6-ին, «ՄԻՆԳՐԵԼԻԱ» (MINGRELIE) շոգենաւը, նաւապետ ԺԻՐՈՒՆ (GIBOIN) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սրբու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսել: Տեղեկությունների մասին պէտք է դիմել ընկերության գործակալներին. Բաթումում պ. Գարանիսին և Թիֆլիսում պ. Բէնոնին, նախկին Արժուռու գալիերէում, № 103.

ԹՈՅԼՏՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՐՍԵԼԻԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



Նոտություններ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու: Գինը 1 ր. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով:

Կարմիրադեղ—Eugénie. Տեղով, Թուրքիոյ և ակադեմիկոսներին ընտանի վարդի գոյն տալու, որ չէ փոխում էլէկտրական լուսատուութեան ժամանակ և որ չէ սրբում երեսի քրտինքից: Առաջարկվում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար: Գինը 1 ր. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով:

Այդ բոլոր երեք կոսմետիկական արդիւնները բժշկական վարչութեամբ, չեն պատահում իրանց մէջ որ և է շնորհակալ ներքին:

ԱՐՏՈՒՆԻՒՄԻՆ ՍՏԱՅԱՄ ՊՈՄԱԴ

Խակական «Pasta Eugénie», գերադանք միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախորժ երեւոյթների դէմ: Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն: Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.

Քլինին-գլիցերինային պոմադ. պերուական բաղադրից, մազերը պնդացնելու, խտացնելու և մեծացնելու համար: Գ. 2 ր. սրուակի համար:

Ձեռքերի պոմադ: Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.: Խաղաղանքի սրուակի վրա գտնվում է պաշտպանողական գրաշմ, մի «Երեւոյթ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Խակական «Poudre-Eugénie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի վրձնում 1 ր. 50 կ. առանց վրձնի 1 ր. 20 կ.

Մազերի ներքին երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-չէկ. Գ. արկղիկի 3 ր. Ներքին «Բիս-Գուտմանի» գործարանի:

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍԻՄ գտնվում է Վ. Գրիգորի և Կ. Գրիգորի գեղատաան ապրանքների մազագիւղում, Վլոնդոն հիւրանոցի տակ, Ջուրալովի տանը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՅԼՏՈՒԹԻՒՆ ՍՏԱՅԱՄ

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԿՆԴԵՂ

ՄԻՇՈՒՆԱՅ

ՄԵՆ ԵՒ ՓՈՒՐ ՄԿՆԵՐԸ կատարելապէս ոչնչացնելու համար: Արկղիկի գինը 1 ր. 50 կ. Արկղիկի 1/4 արժեք 60 կ.:

Հեղուկ բաղադրիչը ինքնին Սրուակի գինը, վրձնում միասին 1 րուբլի:

Լուս, ցեց, բոլոր ոչնչացնելու փոշի: Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍԻՄ գտնվում է Վ. Գրիգորի և Կ. Գրիգորի գեղատաան ապրանքների մազագիւղում, Վլոնդոն հիւրանոցի տակ, Ջուրալովի տանը:

ՅՈՒՆԻՍ		Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց		1886 թ.	
ԱՆԴՐԱԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱՐՈՒՂՈՒ ԳՆԱՅՔՆԵՐ		ՇՈՒԿԵՆԱԻՆ «Ռուսաց ընկ. նաւագնացութեան և առևտրի»		ԹՈՅԼՏՈՒՄ ՊԵՏՈՑԻՆԵՐԻ ՏԱԿԱՍ	
ԹԻՖԼԻՍԻՑ Բաթում փոստային գնացքը գնում է առաւօտ.		Հին-ԳԱՐԲԻ 4 ժամին կէս օրից յետոյ շոգենաւը գնում է ուղղակի ընդամ ԲԱՐՈՒՄԻՑ գէպի ՕՂԵՍՍԱ:		Թիսած հաց կրուպչակայ ալիւրից ֆուն.	
ԲԱՐՈՒՄԻՑ Թիֆլիս գալիս է երեկ.		ԳԱՐԱՐ 8 ժամ. երեկոյ. շրջական ընդամ ԲԱՐՈՒՄԻՑ գէպի ՕՂԵՍՍԱ:		Յորենի ալիւրից 1 տեսակի	
ԹԻՖԼԻՍԻՑ Բաթում գնում է երեկոյ.		ԿԻՐԱԿԻ Երեկոյեան արտասահմանեան ընդամ ԲԱՐՈՒՄԻՑ գէպի Կ. ՊՈԼԻՍ:		Թոնրի մէջ թիսած հացի ֆուն.	
ԲԱՐՈՒՄԻՑ Թիֆլիս գալիս է առ.		Շոգենաւերը գալիս են ԲԱՐՈՒՄ. երեք շաբթի երեկոյեան Օղեսայից, ուրբաթ առաւ. Օղեսայից (ուղղակի ընդ) և շաբաթ առաւ. Կ. ՊՈԼԻՍ:		Կրուպչ. և ցորենից լավաշներ 1 տեսակի	
ԹԻՖԼԻՍԻՑ Սուրբ Կարգ. պատ.				2 — — — — —	
Գնացքը գնում է կէսօրից յետոյ				3 — — — — —	
ՍՈՒՐԱՄԻՑ Թիֆլիս գալիս է առ.				21 1/2 >	
				41 1/2 >	
				31 1/2 >	
				7 >	
				6 >	
				14 >	
				7 >	